





### ՀԱՄԱՀ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Է. ԲԱՆԱԿՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ ԵՆ



Նախագետը օր բանակավար այցելած  
Գախազար Զոհարեանի խօսքի պահուն

26 Յուլիսին սկսած ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Է. Բանակումին աշխատանքները արդեն ընթացքի մէջ են եւ կանոնաւոր ձեւով ու մեծ խանդավառութեամբ կը շարունակուին:

Աշխարհի չորս ծագերէն համախմբուած արի-արեւոյշներ խանդավառ ու հետաքրքրական մթնոլորտի մէջ ապրեցան երէկ:

Երեկոյեան, բանակավար վերադառնալէ ետք տեղի ունեցաւ խարուկահանդէս:

Միւս կողմէ, Միջպագային Սկսուողական Գրասենեակի ընդհանուր քարտուղար Ժաք Մորէօն հարցապարոյց մը ունեցած է Հայաստանի լրատուամիջոցներուն հետ եւ անդրադարձած է Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր գնահատելի գործունէութեան:

Յայտնենք, թէ Հ.Մ.Ը.Մ.ական 18 սկսուողներ եւ բանակումին ընդհանուր խմբապետը, 2 Օգոստոսին հարցապարոյց մը պիտի ունենան Հայաստանի Ազգային Հեռուստատեսութեան (Հ) «Կէս գիշերային ձեպընթաց» յայտագիրէն:

### ԱՐՅԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

●Յովհաննէս Մանճիկեանի մահուան առիթով,  
Տէր եւ տիկին տոքթ. Յակոբ Լոզոյեան 30,000 Լ.ո.

●Թրֆանտա Ճիւզաշեանի մահուան առիթով,  
Տէր եւ տիկին տոքթ. Յակոբ Լոզոյեան 20,000 Լ.ո.

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ  
Այսօր կէսօրը ետք, ժամը 6:30ի լուրերուն ետք կրնաք լսել մեր հարցազրոյցը՝  
Հայ Աւետարանական Զոյեալի տնօրէն՝  
**ՊՐՆ. ԶԱԲԵՆ ՄԱՐԿԵԱՆԻ** հետ  
Նիւթ՝  
«ՀԱՅ ԱԶԿԵՐՏԸ ԵՒ ՕՏԱՐ ԴՊՐՈՅԸ»

### ՈՒՐԻՇ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ

## ԵՐԱԶ ԻՄ ԵՐԿԻՐ

### ԱՌԱՋԱԿԱՐԳ ՇՐՋԱՊՏՈՅՏՈՎ

5 ՍԵՊՏԵՄԲԵՐԸ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ  
FULL - BOARD 689 \$-ն սկսեալ  
7օրեայ եւ 14օրեայ ձոխ ծրագիրներով

### ՎԱՅԵԼՔԻ

### ԱՆՄՈՂԱՆԱԼԻ ՕՐԵՐ

Կեցութիւն՝ VALENCIA \*\*\* հիւրանոց  
Շրջապատոյտի առաջնորդ՝  
**ՕՆԵԿ ԳԱՆԹԱՐՃԵԱՆ**  
Տեղերը ապահովելու համար դիմել՝  
մինչեւ 20 Օգոստոս

### ԱԽԹԱՄԱՐ ԸՆԿԵՐԱԿ.

01 - 260850 եւ 03 - 203533  
**ANSER TOURS:**  
01 - 562044 - 5 եւ 01 - 562870 - 71

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Ի ՊԱՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՆՕՐԵՆԵՐՈՒՆ

Հայկազեան Համալսարանի Շրջանաւարտից Միութեան կազմակերպութեամբ՝ երէկ, Երեքշաբթի, 30 Յուլիսի երեկոյեան ժամը 7:30ին, Հայկազեան Համալսարանի «Մուկար» պարտէզին մէջ, տեղի ունեցաւ ընդունելութիւն մը՝ առիտ երախտագիրութիւն համալսարանի նախկին տնօրէն վեր. Ժան Նանճեանի եւ իրրեւ բարի գալուստ նորանշանակ տնօրէն վեր. Փօլ Հայտոսթեանի:



Համալսարանի Գախիկն եւ Գոր Գախազարեան

Ներկայ էին պաշտօնական հիւրեր, պետական, քաղաքական, կուսակցական եւ դիւանագիտական անձնաւորութիւններ, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներ եւ շրջանաւարտներ:

Իտրականութիւն: Ան նշեց, թէ Հայկազեանը վերջին տարիներէն իր վայրի մը, ուր կան ուսում ստանալու բոլոր տուեալները: Ապա ան ծանօթացուց վեր. Փօլ Հայտոսթեանը եւ ըսաւ, թէ ան իրրեւ շրջանաւարտ արդէն իսկ կ'աշխատի յօգուտ Համալսարանին: Ան բարի երթ մտղթեց եւ իր գորակցութիւնը յայտնեց անոր:

Վերջին խօսք առնողը եղաւ վեր. Փօլ Հայտոսթեան, որ ըսաւ, թէ Հայկազեանը Համալսարանին մէջ իր անձնակազմը կ'աշխատեցնէ իր անձնակազմը: Մեր անձնակազմը մեզ պահած են պատմութեան փոթորիկներուն դիմաց, մեզի տալով ինքնուրուի ու նկարագրի, դառնալով մեր հօգուտեան ու յաւերթութեան աղբիւր: Հետեւաբար Լիբանանի Հայ Համայնքը պատրաստ է իր ամբողջական ու գործունէ մասնակցութիւնը բերելու այն բոլոր աշխատանքներուն, որոնց նպատակն է հոգեւոր, բարոյական ու մարդկային արժէքներ ամրապնդել Լիբանանի ժողովուրդի կեանքին մէջ:

### «ՎԱՆՏՈՄ ԷՆԹԵՐՔՈՆԹԻՆԱՆԹԱՆ»Ը ՔԱՀԼԻ ԾԵՐԱՆՈՅԻՆ ՄԷՋ ՏՕՆԵՅ «ՃՆՈՂՆԵՐՈՒ ՕՐ»Ը

«Վանտոմ Էնթերքոնթինանթայ» պանդոկի իր ընկերային եւ համայնքային ծառայութեան բաժանմունքին խողովակով գեղեցիկ սովորութիւն ունի իւրաքանչիւր տօնական առիթով բարեխաղական գործունէութիւն տանիլ եւ այցելել Լիբանանի քաղաքային համայնքներու հովանաւորութեան տակ գտնուող հիւանդանոցները, որբանցներն ու ծերանոցները եւ նուէրներով, ուտելիքով, ինչպէս նաեւ երիտասարդ կամաւորներն ընկերակցութեամբ իւրաքանչիւր տարբեր տարիքի կարիքաւորները:

### ԿՈՒՉԵՍ ԶԱՐՈՒՆԱԿԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԳ Արձանագրուէ՝

## ՓՕԼԻԿԼՕԹ

### ԹԵՔՆԻԲԸԸ ԲՈԼԵՃԻ

Մասնագիտութիւն (T. S., B. A.) զոյգ վկայականներ  
●Որակաւոր ուսուցչակազմ  
●Լիբանանեան միջազգային ճանաչուով վկայականներ (T. S., B. A.)  
●Մատչելի կրթաթոշակ եւ վճարման դիւրութիւն  
●Առաւօտեան եւ երեկոյեան դասընթաց

**POLYGLOT - Տոքթ. 251320**  
Տէր եւ տնօրէն ՊԵՏՐՈՍ ԶԵՄԵՆԵԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՆԵՐՈՒ ՏԱՐԱԾՄԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ – ԻՍԼԱՄ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՕՏ

Երէկ Պիեթրայայի վանքին մէջ Արամ Ա. կաթողիկոս ընդունեց Բարոյական Արժէքներու Տարածման յանձնախումբը: 9 հոգիէ բաղկացած յանձնախումբին մաս կը կազմէ Կրիկիոյ կաթողիկոսութեան կողմէ՝ Փառէն վրդ. Վարդանեան: Ծանօնախումբը կը հովանաւորէ «Թեյէ Լիւմիէր» պատկերասփիւռի կայանին յայտագիրները եւ հանդիպումներ կ'ունենայ պետական, համայնքային ու կուսակցական պատասխանատուներու հետ, որպէսզի կրօնական ու բարոյական արժէքները յարգուին Լիբանանի ընկերութեան կեանքի բոլոր բնագաւառներէն ներս:

Հանդիպման ընթացքին յանձնախումբը պարզեց ցարդ իր կատարած աշխատանքներուն արդիւնքները եւ խնդրեց վեհափառ հօր աջակցութիւնը, ինչպէս նաեւ իմանալ անոր տեսակէտները:

- Վեհափառը շեշտեց հետեւեալ կէտերը:
- 1) Կրօնաբարոյական արժէքները հիմք կը կազմեն ընկերութեան կեանքին: Որեւէ ընկերութիւն, որեւէ կառույց, որ իր կեանքին ու գործունէութեան մէջ կ'անտեսէ բարոյական հիմնական արժէքներն ու կրօնական անարժէքներն, կը դառնայ շարիքի աղբիւր: Թէեւ իւրաքանչիւր կրօն իր սեփական ըմբռնումներն ու մտեցումները ունի, սակայն հասարակաց հիմնական արժէքներ կան, որոնք պէտք է իրարու միացնեն բոլոր կրօնները եւ ընկերութիւնները, որպէս մարդկային հաւաքական ու ընդհանրական արժէքներ:
  - 2) Լիբանանը համայնքներու ընտանիք մըն է: Այդ ընտանիքէն ներս զանազանութիւններ կան, եւ պէտք է ըլլան, սակայն նաեւ հասարակաց արժէքներ կան, սկզբունքներ կան, որոնք կը կազմեն հիմնաքարը Լիբանանեան մեծ ընտանիքին:
  - 3) Լիբանանահայ Համայնքը յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ հոգեւոր ու բարոյական արժէքներուն: Մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին պատմութիւնը ցոյց կու տայ, թէ անոնք մեզ պահած են պատմութեան փոթորիկներուն դիմաց, մեզի տալով ինքնուրուի ու նկարագրի, դառնալով մեր հօգուտեան ու յաւերթութեան աղբիւր: Հետեւաբար Լիբանանի Հայ Համայնքը պատրաստ է իր ամբողջական ու գործունէ մասնակցութիւնը բերելու այն բոլոր աշխատանքներուն, որոնց նպատակն է հոգեւոր, բարոյական ու մարդկային արժէքներ ամրապնդել Լիբանանի ժողովուրդի կեանքին մէջ:

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔ

## ՆՈՐ ՍԱՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի տեսչութիւնը իւրաքանչիւր կրօնաւորը կը յայտարարէ Լիբանանի թեմի հաւատացեալներուն, որ դպրեվանքի յառաջիկայ ԳԿ. (73րդ) կրթական տարեշրջանին համար պիտի ընդունի ճոր սաներ:

Մուտքի արձանագրութիւնները ու ընդունելութիւնը տեղի պիտի ունենան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքին մէջ, Պիեթրայ, Երկուշաբթի Ընդազաբի, ամէն օր ժամը 8:30էն 12:30:

Ներկայացող թեմաձուները պարտին ըլլալ երկրորդական ուսման ընթացքին մէջ եղողներ, աւարտած Գախազարեանի ուսումը, անուսուց վեցերորդ դասարանը եւ ամբողջացուած 13 - 14 տարեկանը: Զաջալերելի են յատկապէս մեծ տարիքով տղաքը՝ համալսարանական կրթութիւն ստացած կամ այդ հանգրուանին մէջ եղողները:

Ներկայացող թեմաձուները պարտին իրենց հետ բերել.-

- 1- Բարի վարուց վկայագիր՝ ծխատեղ քահանայէն
- 2- Հաստատագիր՝ դպրոցի տնօրէնութենէն
- 3- Վերջին տարուան վիճակագրոյց
- 4- Բժշկական վկայագիր
- 5- Անձնաթուղի եւ ընտանեկան տաճարային փայտապատճենը
- 6- Երկու գունձուր լուսանկար

Կոչ կ'ուղղուէ մեր ժողովուրդին, որ դպրեվանք ուղարկեն ուսումնասիրելու փայլուն, մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդին ծառայելու առակ եւ կարող սաներ:

ՏԵՍՏԻՐՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՔ

### ԻՆՉ ԿՐԵՆ ԿԱՍ ԿՐԵՆ

## ՓՕԼԻԿԼՕԹ

### ԲՈԼԵՃԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏԵՐԸ

«... Փօլիկլօթին ստացալ համակարգիչի նորագութեան պետական վաւերացումով վկայական: Կ'աշխատին միջազգային ընկերութեան մը մէջ Տուրայ: Ծնորակալութիւն Փօլիկլօթի...»:

ԿԱՊԻ ՀԻՇԱՍ

## ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:






# Միջապգային Քաղաքական Կեանք

## ԱՐԱՖԱԹԸ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄԸ ԿԸ ՓՆՏՌՈՒԻ...

Հիւսիսային Իսրայէլի մէջ, Յունիսի առաջին օրերուն կատարուած պաղեստինեան անձնասպանական գործողութեան իրրեւ հակազդեցութիւն՝ Իսրայէլեան բանակը պաշարեց պաղեստինցիներու նախագահ Եասէր Արաֆաթի բնակավայրը եւ զայն քանի մը ժամ ուժեղ կոծեց՝ սպանելով Արաֆաթի գործակիցներէն մէկը: Այս առիթով, սուր ամբաստանութիւններ փոխանակուեցաւ: Արաֆաթի ու Իսրայէլի պետական պատասխանատուներուն միջեւ: Վերջինները անգամ մը եւս հրապարակ նետեցին Արաֆաթի անգորութեան վարկածը ու սկսան զայն փոխարինողներու որոնման: Ուաշինկթըն եւս շուտով ձայնակցեցաւ այս տեսակէտին, ու արդէն իսկ կը խօսուի կազացի կամ այլ ներկայացուցիչներու մասին, որոնց դէմ Իսրայէլ չունի persona non gratta կեցուածք:



Իսրայէլ - պաղեստինեան ամէնօրեայ հակամարտութեան հետեւող միջին մարզը յաճախ կը տարուի օրը - օրին կատարուող դէպքերու «հեղեղով» ու իրաւամբ կ'անտեսէ դէպքերուն ընդհանուր գիծերը: Փորձեմք քանի մը մատնանշում կատարել, տեսնելու համար, թէ ինչպիսի անհեթեթութիւններու կը հասնի Իսրայէլի անգիջողութիւնն ու անհանդուրժողութիւնը, անգամ անոր ֆաշականութիւնը (ինչպէս բնութագրեց Արաֆաթ՝ իր բնակավայրին փլատակներուն տակէն դուրս գալէ ետք):

- Եթէ օրոպիւս մը կամ գերվաճառատուն մը թիրախ ընտրող պաղեստինցի իր անձնասպանական գործողութեան պատճառով ահաբեկիչ ու ոճրագործ որակումը կը ստանայ, ինչ որակում պէտք է տայ բանակի մը, որ օր ցերեկով ու ամբողջ քանի մը ժամ կը ուժեղանայ իրեն հրահանգ տուող պետական իշխանութիւններուն կողմէ ճանաչում ստացած պետական ղեկավարի մը կեղծորոշանքին ու մարդասպանութիւն կը կատարէ:

- Եասէր Արաֆաթի դէմ մահափորձերը նորութիւն չեն: ան աւելի քան ամիս մը առաջ եւս թիրախ դարձաւ Իսրայէլեան բանակի հրասայրերու թնդանօթներուն, երբ նոյն բանակը պաշարած էր ու հիմնադրատակ կը կործանէր ժենիդի պաղեստինեան թաղամասերը ու զայն կը վերածէր Բ. Աշխարհամարտի օրերուն հաւանոր բարկոծումներու ենթարկուած քաղաքներու պատկերը յիշեցնող վիճակի: Արաֆաթի



Կազայի իսրայէլեան օդանաւային վերջին յարձակումին վիրաւորուած պաղեստինցի 10 տարեկան պատանի մը:

դէմ նոյնիքն Շարոնի հրահանգով մահափորձեր կատարուած են նաեւ անցեալին պէտք չէ մոռնալ, օրինակ, Պէրլիտի պաշարման օրերուն կատարուած օդանաւային յարձակումը՝ պէրլութեան այն թաղին ու մասնաւորաբար այն շէնքին վրայ, ուր Արաֆաթ ժողով մը ունեցած էր եւ յարձակումէն միայն քանի մը վարկեան առաջ հեռացած էր ժողովատեղիէն...:

- Միացեալ Նահանգներ թուրքաբար կը կրկնեն Արաֆաթի փոխարինողի մը փնտռութեան վարկածը, մոռնալով, որ մօտաւորապէս երկու տասնամեակէ ի վեր ինք էր նոյնիքն Արաֆաթը համոզել փորձողը, որպէսզի վերջ տայ Իսրայէլի հանդէպ թշնամանքի իր քաղաքականութեան ու խաղաղութեան համաձայնագիր կնքէ իր երեսմիկ թշնամիին հետ: Քարթըրի օրերուն ՄԱԿի մօտ Միացեալ Նահանգներու երեսմիկի դեսպան էնտրու Եանկ օր մըն ալ պաշտօնանկ եղաւ, որովհետեւ (իբրեւ թէ արտաքին գործոց նախարարութեան առանց լուր տարուէ) գաղտնի բանակցութիւններ ունեցած էր պաղեստինցիներուն հետ: Յետոյ, Ուաշինկթըն պաղեստինցիներու աւանդական ղեկավարութեանէն միայն Եասէր Արաֆաթը կրցաւ իբրեւ բանակցող ու համաձայնող կողմ գտնել (ընդհամ Նայիթի Հատուածներու, Աճմէտ Ժիպրիլներու կամ Ժորժ Հապաններու), որպէսզի սարքուէին Օսլոյի բանակցութիւնները եւ Արաֆաթը առաջնորդ

դուէր համաձայնագիրի մը, որուն իրականացման համար պաղեստինցիք երկար պիտի սպասէին, մինչեւ որ Արիէլ Շարոն ու անոր համախոհները գային յայտարարելու, թէ պաղեստինցիներուն տրուած խոտուումները (իսկական ինքնավարութիւն, բնակեցման քաղաքականութեան դադրեցում ու հուսկ յետոյ պաղեստինեան պետութեան մը ստեղծումը) անիրականանալի բաներ են եւ Իսրայէլ ինքն իրեն իրաւունք կու տայ այդ համաձայնութեանէն ետդարձ ընելու:

Այս բոլորը հանդուրժողութեամբ ու հասկացողութեամբ ընկալուեցան Ուաշինկթընի կողմէ, որ իր կարգին կը թուի մոռցած ըլլալ իր դերակատարութիւնը ու իր իսկ կողմէ ճշդուած սկզբունքները՝ Օսլոյի համաձայնագիրին իրականացման առիթով: Յայտնի կը դառնայ, որ Ուաշինկթըն նախկին «հաւրեկիչ» Արաֆաթի համար դերակատարութիւն մը վերապահած էր եւ այդ նպատակով սկսած էր գործել 80ական տարիներէն ի վեր, իսկ հիմա, երբ Արաֆաթ այդ դերը կատարած է մինչեւ տրամաբանական տեղ մը ու անկէ անդին չի կրնար անցնիլ, Ուաշինկթըն տրամաբանական կը գտնէ, որ անոր դերը աւարտած է ու պէտք է զայն փոխարինող մը գտնել իր դէպ, Անուար Սատաթի ահաբեկումէն ետք եւս եղան նմանօրինակ արտայայտութիւններ, թէ՛ Սատաթի դերը սահմանուած էր Իսրայէլի հետ խաղաղութեան համաձայնագիրի կնքումով, որմէ ետք ան պէտք էր հեռացուէր հրապարակէն: Հապա ինչ եղան ժողովրդավարութեան պաշտպանը ու դրօշակիրը ըլլալու ամերիկեան իշխանութիւններու յաւանութիւնները: Մոռցա՞նք, որ Արաֆաթ իր ժողովուրդին քուէով հաստատուած է այն աթոռին, որուն վրայ էր ՅՈԱԿան տարիներէն ի վեր, շնորհիւ իր առաջնորդած ազատագրական պայքարին...:

- Գալով նոյնիքն փոխարինողի պատմութեան ու հաւանական թեկնածուներու յատկանիշներուն: Հոս եւս կը թուի, թէ պատմութիւնը ինքզինք պիտի կրկնէ ամերիկեան անհետատեսութեան վաստակը նորանոր «նուաճումներով» հարստացնելու համար: Այն, ինչ որ կ'ըստին Արաֆաթի հաւանական յաջողութեան մասին, կը վերաբերի այնպիսի «ղեկավարներուն», որոնք աթոռ մը ունենալու համար պատրաստ են կամակատարը դառնալու արտաքին հզօր ուժերու, մինչեւ իսկ եթէ այդ ուժը ըլլայ իրենց ժողովուրդին իրաւունքները անտեսող ու զանոնք իրերայաջորդ ջարդերու ենթարկող Իսրայէլը: Ուաշինկթըն նման քաղաքականութիւն կիրարկեց Լատին Ամերիկայի մէջ, 70ական տարիներէն սկսեալ, ու այսօր կը գործանայ, թէ լատին ամերիկեան երկիրներու ժողովուրդները ինչո՞ւ իր մասին իրենց կարծիքներուն ձեւաւորման համար կը հետեւին Ֆիտէլ Գաթթուոյի մը: Տակաւին չենք խօսիր Մայրաքոյն Արեւելքի երկիրներուն մասին, որոնցմէ վերջինը՝ Մայիսի վերջերուն անկախութեան տիրացած Արեւելեան Թիմորը, վերջին քանի մը տարիներուն տառապեցաւ Ուաշինկթընի շիլ քաղաքականութեան պատճառով եւ տոււաւ ըզմահազար գոհեր:

Մատնանշումներու եւ նկատողութիւններու շարքը կարելի է երկարել, սակայն այսքանն ալ գաղափար մը կը կու տայ, թէ ժողովուրդներու տարական իրաւունքներու ու ժողովուրդավարութեան պաշտպանի պատմութեանը կրողները այսօր իրականութեան մէջ ինչպէս կը դաւաճանեն իրենց դաւանած սկզբունքներուն:

Շատ դիւրին է դատապարտել մարդիկ, որոնք անձնասպանական գործողութիւններու համար թիրախ կ'ընտրեն անգէն մարդիկ, մանուկներ ու կիներ: Նման արարքներ այլապէս արդարանալի չեն ու փաստուած է, որ աւելի վնաս կը հասցնեն հետապնդուած դատին, քան շահ կ'ապահովեն անոր: Սակայն նաեւ պէտք է հարց տալ, թէ ի վերջոյ, ինչո՞ւ կը կատարուին այդպիսի արարքներ:

Պատասխանը շատ պարզ է: Երբ իրաւազրկեալը կը դուրի այնպիսի յուսահատական կացութեան մը մէջ, ուր ալ կորսնցնելիք չունի, մինչեւ անգամ կեանքը կը դառնայ իմաստագործ, ատկէ անդին պէտք չէ զարմանալ՝ ի տես նմանօրինակ գործողութիւններու: Ոճրայինը՝ նման գործողութիւնները առիթ ծառայեցնելն է պաշտօնական ոճիրներ կատարելու համար:

Իսրայէլ ու Ուաշինկթըն պիտի կարենան գտնել

Ս. ՄԱՀՍԵՐԷՃԵԱՆ

Շար.՝ էջ 10

## ԱԶԱՏ ՇՈՒԿԱՆԵՐԸ ՅՈՒՍԱԽԱՐ ԸՐԻՆ ՑԱՄԱԲԱՄԱՍ ՄԸ

Երբ ձորճ Պուշ Իշխանութեան գլուխ եկաւ, ան ճանչցուած էր իբրեւ մարդ մը, որ շատ գաղափար չունի Միացեալ Նահանգներէն դուրս գտնուող աշխարհին մասին: Կար սակայն մարդ մը, որուն մասին կ'ըսէին, որ գաղափար ունի: Իբրեւ թեքսասի նախկին կառավարիչ՝ ան պատասխանատուն էր Միացեալ Նահանգներու մեծագոյն լատին համայնքին եւ, կ'ըսուէր, որ ան սպաններէն կը խօսէր: Իրմով Լատին Ամերիկան գէթ, այժմ ունեցաւ ամերիկացի նախագահ մը, որ կրնար հասկնալ գինք:

Լատին ամերիկացիները հասկնալու Պուշի հուշերը անկուծ արձանագրեց, երբ ան Պրազիլի քաղաքի մտաւորական նախագահ Ֆեռնանտո Էնրիքէ Քարտոսոյին խոստովանեցաւ իր զարմանքը՝ Պրազիլի ընակչութեան ամբողջովին սպիտակամորթները չըլլալուն համար: «Ըսել կ'ուզեմ՝ համարութեան կ'ունիք հոս», նշեց ան: Սակայն նկատի առնելով, որ Պրազիլի մէջ փորձութեան արարքները կը խօսին, հաւանաբար վրիպակ մըն էր այդ մէկը: Յուսեցի, որովհետեւ ձորճ Պուշի նախագահ ընտրուելէն ի վեր Լատին Ամերիկան ոչ միայն չի բարգաւաճեր, այլեւ խառնակ վիճակի մէջ է:

Տասը տարի առաջ, Ուաշինկթընի կարծիքով Լատին Ամերիկան լաւ օրերուն մէջ էր: Երկար տարիներ բռնատիրական վարչակարգերով կառավարուելէ ետք, շարք մը երկիրներ ժողովրդավարութիւն ձեռք բերին, մեծ մասամբ բացայտ կամ գաղտնի միջամտութեամբ Միացեալ Նահանգներուն Միայն Նահանգներուն տարբեր աշխարհի մը միակ յիշատակը, եւ վստահաբար Քասթրօ երկար չի մնար իշխանութեան գլուխ:

Աւելի կարեւորը այն է, որ Միացեալ Նահանգները համոզեցին լատին ամերիկեան նոր կառավարութիւնները, որպէսզի լքեն շրջանի տնտեսաւարձութեան հակադրական ուղեգիծը նկատող տնտեսական մաքսային քաղաքականութիւնը՝ ի նպաստ ազատ շուկայի ազատականութեան: Արժանութիւնի փրկուած մը տեղի ունեցաւ լուր աշխարհին առջեւ, եւ Միւլստ նոր ուղեգիծին, բարգաւաճումը շուտով պիտի գար:

Ոմանց պարագային այդպէս ալ եղաւ Սակայն մեծամասնութեան համար 1990ականներուն պատմութիւնը սեփականաշնորհմանն է ազատ շուկաներու վարչակարգէն օգտուող քանի մը անձերու եւ մնացեալ ժողովուրդին միջեւ եկամտութիւն հետզհետէ մեծ տարբերութեան պատմութիւնն է: Ներկայիս նոյնիսկ այդ փոքր յառաջնորդացը անհետացող յիշատակ մըն է:

Քասթրոն տակաւին տեղն է եւ ունի նոր դաշնակից մը՝ Վենեսուելայի նախագահ Հիւկօ Չաւէշը, որ ի յուսախաբանութիւն Ուաշինկթընի, վերապրեցաւ յեղաշրջումէ մը այս տարուան սկիզբը: Ան իշխանութեան

ունին, ունի նորընտիր նախագահ մը՝ Ալվարօ Ուրալայ, որուն մենատիրակալութեանն էր ընտրական նշանաբանին մէջ՝ «ուժեղ ձեռք, լայն սիրտ»։ Անցեալ շաբաթ ան անցելից Բրիտանիա, ուր ծանուցեց Քոլումպիոյ 40 տարուան քաղաքացիական պատերազմին եւ թմրեցուցիչի առեւտուրի մասին իր լուծումները: Նախկին նախագահ Անտրէս Փասթրանայի օրերուն հաստատուած զինադադարին պայմանաժամը աւարտեցաւ իր նախագահութեան վերջին շաբաթներուն:

Ուրալայ կ'ուզէ գօրացնել քաղաքային զինուոր խումբերը: քայլ մը, որ դէպի պատերազմ կը մղէ զիւղական բնակչութիւնը, որ կ'ուզէ դուրս մնալ անկէ: Առաւել, ան կը ծրագրէ նուազեցնել իրաւունքները դատական մարմիններուն, որոնք կրնան դատական գործ յարուցել մարդկային իրաւունքները բռնաբարող զինուոր պատասխանատուներուն դէմ: Ան Ուաշինկթըն այցելեց Եստեմալ գինուորական ուժ խնդրելու եւ անոնց գործունէութեան սահմանափակումները վերցընելու խնդրանքով:

Թմրեցուցիչի դէմ պայքարի անուսով սկիզբ առած ամերիկեան միջամտութիւնը վերածուեցաւ զինուորական միջամտութեան՝ Քոլումպիոյ անհաղթահարելի քաղաքականութեան մէջ:

Աղէտալի համայնապատկեր մըն է եւ արժանի է ուշադրութեան, յատկապէս շրջանային գերութիւն կողմէ: Լատին Ամերիկա այցելելու համար Պուշին ընկերակցող պատուիրակութիւնը անկողնի նմանութիւն ունի իր հօր կազմած պատուիրակութեան, երբ այսօրվ թիւնը այնքան չէր շարժուած, որ նոյնիսկ նախկին նախագահ Ռաուլ Ալֆոնսօնի, որ ոչ մէկ պատասխանատուութիւն ունի իր նախնային տառապանքներէն, բացայտ թէ ծածուկ զինուորական միջամտութիւններ ընել են աչք գոցել մարդկային իրաւանց բռնաբարութեան, եւ այս բոլորը՝ ժողովրդավարութեան համար պատերազմներու եւ ազատ շուկայի անունով: Աստիք իրագործուեցան եւ ընդվզում եւ սով կայ ցամաքամասի տարածքին: Պարզ ժողովուրդին կարծիքով, փորձը ձախողած է:

ԻՉԱՊԵԼ ՀԻԼԹՈՆ  
«Տը Կարտիքն»

**www.hamazkayin.com**

ԱԶԳ. «ՅԱՍԱԶ - Գ. ԿԻԼՊԵՆԿԵՆ»  
ԵՐԿԻՐ. ՎԱՐԺԱՐԱՆ

**ՏՆՕՐԵՆԻ ԿԱՐԻՔ**

Ազգ. «Յառաջ - Գ. Կիլպենկեան» երկրորդ կարգի կարիք ունի վկայեալ տնօրէնի մը: Փափաքողները իրենց դիմումները կրնան ներկայացնել վարժարանի խնամակալութեան: Եւ. 08-620616 Fax: 08-620614

ԽՆԱՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ՄԵԾ ԳԵՐԴԱՍՏԱԼՆԵՐ

Հարախանեան գերդաստանը տուած է ականաւոր դէմքեր, ազգային, հասարակական, կրօնական, կրթական, քաղաքական, յեղափոխական ու պետական բազմաթիւ գործիչներ, որոնցմէ շատեր ազդեցիկ դերակատարութիւն ունեցած են: Չարմահալի հայաթափումն պայմաններուն տակ գաւառաբնակ Հարախանեանները ցրուեցան տարբեր քաղաքներ ու երկիրներ:

#### ՔԻՒՍԱ ԵՂՆԱԶԱՐ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ ՂԱՐԱԽԱՆԵԱՆՆԵՐ

Մեծբար խան Հարախանեան երբ 1868ին Սուրբ Էջմիածին ուխտի գացած էր, տոհմատանական իր իրաւասութիւնները եւ Սիրաքի տանուտիրութիւնը եղբորորդիին՝ Եղնազարի յանձնած էր: Եղնազար քիւսալուծեան տիտղոս ստացաւ եւ տէր կանգնեցաւ տոհմին եւ ժողովուրդին:

Քիւսա Եղնազար իր նախահայրերու օրինակին հետեւելով աշխատեցաւ օգտակար ըլլալ բոլորին, գործօն մասնակցութիւն բերաւ ազգային, եկեղեցական ու հասարակական բոլոր գործերուն. ան անձնապէս կը հետաքրքրուէր գիւղացիներուն վիճակով եւ կ'օգնէր բոլորին:

Սիրաքիներուն եւ ընդհանուր առմամբ չարմահալացիներուն համար հինէն ի վեր կենսական կը նկատուէր Սիրաքի եւ Թաղանաքի միջեւ հոսող գետին վրայ կամուրջի մը կառուցումը՝ դիրարցնելու համար երթեւեկը եւ արտաքին աշխարհին հետ կապը: Քիւսա Եղնազար իր ջանքերով իրականացուց կամուրջին կառուցումը: Չարմահալացի աշուղներ, կամուրջին կառուցումը մեծ իրադարձութիւն եւ քիւսա Եղնազարի իմաստութեան արգասիքը նկատելով՝ իրենց երգերուն մէջ անոր գովքը հիւսեցին եւ անմահացուցին զայն: Քիւսա Եղնազար մահացաւ 1892ին, Սիրաքի մէջ:

Իրրեւ տոհմապետ եւ Սիրաքի տանուտէր՝ անոր յաջորդեց գաւազը՝ Սամուէլ, որ նոյնպէս անշահախնդրօրէն ծառայեց ժողովուրդին: Սիրաքի անոր օճախը բաց էր բոլորին, ուր ասպնջականութիւն եւ հիւրասիրութիւն կը գտնէին բոլորը:

#### ՅՈՒՍԵՓ ՓՈՒԼԱԳԵԱՆ

Հարախանեաններու Փուլազեան ճիւղին Աստուածատուրի գաւազը՝ Յովսէփ ծնած է 1882ին, Մամուլ գիւղը: Կրթութիւնը ծննդավայրի դպրոցին մէջ ստացաւ, ուր իբրեւ ուսուցիչ ունեցաւ նոր ջողովուրդի գործարարները:

Մամուլալի եւ շրջակայքի պախթիարի հողատէր խաներուն եւ անոնց ցեղախումբերուն սանձարձակութիւններուն եւ գիւղացիներուն վրայ ի գործ դրած ճնշումներուն չհանդուրժելով՝ Յովսէփ Փուլազեան անոնց հետ բախում մէջ մը ետք, 1900ին, գաղտնաբար տունէն փախչելով գնաց Թեհրան, ուր մնաց վեց ամիս: Այնուհետեւ անցաւ Պաքոն եւ յետոյ ալ հոնկէ Սեւանի վանքը ապաստան գտաւ, ուր շարունակեց իր ուսումը:

Սեւանի վանքին ուսումնական շրջանը աւարտելէն ետք մեկնեցաւ Էջմիածին եւ Գէորգեան ճեմարան մտաւ. ուսանողական այդ տարիներուն ան իրմեան Հայրիկին ուղարկութեան արժանացաւ եւ սերտ կապեր հաստատեց անոր հետ:

Յովսէփ Փուլազեան այնուհետեւ մեկնեցաւ Ռուսիա եւ կապեր հաստատեց անուանի յեղափոխականներու հետ: Տարիներ շարունակ աստանդական կեանք վարեց ան. 1907ին ժամանակ մը բնակեցաւ Թիֆլիս, ուրկէ յեղափոխաշունչ նամակներ ղրկեց Չարմահալ՝ ազա-

## ՂԱՐԱԽԱՆԵԱՆ ԱԿԱՆԱՒՈՐ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐ

### - ՉԱՐՄԱՀԱԼԵՆ՝ ԴԵՊԻ ԲԱՂԱՔՆԵՐ

տագրութեան գաղափարներ շեփորելով: Անոր յեղափոխական գործունէութիւնը գրաւեց ուսական ոստիկանութեան ուշադրութիւնը. ձերբակալուեցաւ եւ Յարիցիի բանտը նետուեցաւ, ուրկէ վերջին անգամ 1908ին լուր ստացուած է իրմէ:

#### ՅՈՒՍԵՓ ԽԱՆ ՂԱՐԱԽԱՆԵԱՆ

Ազգային հասարակական գործիչ, ուսուցիչ եւ իրանեան պետական մակարդակի վրայ ղեկավար դէմք Յովսէփ Խան, գաւազը՝ Եւաւար խան Մեհրաբ Հարախանեանի, ծնած է 1879ին, Սիրաք: Նկարագիրով համակրելի, կենցաղագէտ ու արդարադատ: Հօր ծուկերուն առջեւ գրել կարող սորվել է ետք, 1888ին ղրկուեցաւ Նոր Զուղա, ուր յաճախեց Ազգային կեդրոնական վարժարանը, գորաւարտեց 1897ին:

Բազարտ արեւաբնակոյտ վարչադարեանի առաջարկով նոյն տարին նոյն դպրոցին մէջ պարսկերէնի եւ ֆրանսերէնի ուսուցիչ եղաւ, իսկ երկու տարի ետք, 1899ին, հօր մօտիկ բարեկամ Ալի Գուլի խան Սարտար Ասատի գաւակներուն Ֆրանսերէնի ուսուցիչը եղաւ:

Յովսէփ Խան 1901-1904 տարիներուն Միսիստի ընկերութեան մէջ պաշտօնեայ եղաւ, որմէ ետք պեւիքական ընկերութեան մը մօտ աշխատանքի մտաւ: 1906ին իբրեւ ուսուցիչ հրահրուեցաւ Չարմահալի Մամուլալ գիւղի դպրոցը, որուն կրթական մակարդակը հիմնական կերպով բարեփոխեց: Արդարեւ, մինչեւ այդ ժամանակ գիւղի գոմերէն մէկը կը ծառայէր իբրեւ դպրոց. Յովսէփ Խանի կարգադրութեամբ գիւղացիներէն մէկուն տան վերնախորհին մէջ սենեակը վերածուեցաւ դպրոցի, ուր փոխադրուեցան աշակերտները:

Այս ժամանակ արդէն ծայր առած էր պարսկական յեղափոխութիւնը՝ ցոյցերով ու խռովութիւններով, որոնց ճնշման տակ Մոզաֆերէտտին շահ սահմանադրութիւն եւ խորհրդարան հաստատեց, բայց անոր յաջորդը՝ Մոհամմէտ Ալի շահ 23 Յունիս 1908ին հակափոխարկութեան յեղաշրջում կատարեց, որմէ ետք յեղափոխութիւնը ծաւալեցաւ եւ խռովութիւնները սաստկացան:

Պախթիարները, Ալի Գուլի խան Սարտար Ասատի գլխավորութեամբ, յեղափոխութեան մղիչ ուժը դարձան. անոնց միացան նաեւ Չարմահալի հայերը եւ քայքայեցին Թեհրանի ուղղութեամբ: Պարսկաստանի հայութիւնը արդէն գործօն մասնակցութիւն ստանձնած էր յեղափոխութեան մէջ, իսկ Եփրեմ խան զինուորական հրամանատար հռչակուած էր:

Մեծապէս ոգեւորուած յեղափոխական շարժումով՝ Յովսէփ Խան, որ ընտանեկան սերտ կապեր ունէր Սարտար Ասատի հետ եւ անոր գաւակներուն քալ ուսուցիչը եղած էր, ամէն ջանք թափեց հայ եւ պախթիարի յեղափոխական ուժերու գործակցութեան ամրապնդման եւ ձեռք բերուած յողթանակները արդիւնաւէտ դարձնելու ուղղութեամբ, մինչեւ որ հայ, պախթիարի եւ Ռաշտի նահանգապետ Սիփահատարի ուժերը 3 Յուլիս 1909ին գրաւեցին Թեհրանը:

Յեղափոխութեան յողթանակէն ետք Յովսէփ Խան Հարախանեան փոխադրուեցաւ Թեհրան, ուր պետական ծառայութեան մէջ մտաւ: 1910ին Աֆիոնի հիմնարկի տնօրէնի պաշտօնը ստանձնեց, ինչպէս նաեւ Եփրեմ խանի կողմէ «Ռուսումաթի» ոգելից ըմպելիներու հարկատուներու հիմնարկութեան կազմակերպիչ ու պատասխանատու նշանակուեցաւ: 1921ին պետական մասնակի տուրքերու կառավարիչի օգնական նշանակուեցաւ, իսկ 1924ին՝ կառավարիչ ու քննիչ: Եղաւ անտեսութեան ու աւելուորի նախարար: Իրանի պետութեան իր մատուցած ծառայութիւններուն համար անոր շնորհուեցաւ ռոթպլէ բարձրագոյն աստիճանը:

Յովսէփ Խան գործօն եւ բոլորանուէր մասնակցութիւն բերաւ Թեհրանի ազգային, եկեղեցական ու հասարակական կեանքի տարբեր բնագաւառներուն մէջ, եղաւ Ազգային խորհուրդի, Համայնական վարչութեան, Պարսկահայ խորհուրդի, դպրոցներու հոգաբարձութեան, Թեմական խորհուրդի, Գողթականական մարմինի, Եղբայրական օգնութեան, Հայ Աղուժբի եւ Բարեգործականի անդամ եւ Չարմահալ գաւառի Հայ Ուսումնասիրաց միութեան պատուոյ նախագահ:

Պետական շրջանակներու մէջ մեծ հեղինակութիւն ունենալով՝ Յովսէփ Խան յաճախ ինք անձնապէս պետութեան մօտ կը ներկայացնէր հայութեան պահանջներն ու ցանկութիւնները: Ազգային մարմինները յաճախ անոր միջո-

ցով իրենց առաջարկները, դիմումները կամ բողոքները կը ներկայացնէին կառավարութեան: Ան նաեւ իբրեւ ընկերակից եւ թարգման կ'ընկերանար թեմակալ առաջնորդներուն՝ շահին մօտ անոնց այցելութեանց ժամանակ:

Պախթիարի ցեղախումբերուն մօտ անոր ունեցած հեղինակութիւնը նկատի ունենալով՝ շահը կամ անոր կառավարութիւնը յաճախ զայն իբրեւ բանաղնաց կ'ուղարկէին պախթիարի խաներուն մօտ:

Յովսէփ Խան Հարախանեան մահացաւ 5 Սեպտեմբեր 1946ին, Թեհրանի մէջ եւ արժանացաւ ազգային ու պետական յուղարկաւորութեան:

#### ՂԱՐԱԽԱՆԵԱՆ ՔԱՂԱՔՆԵՐ

Տէր Յարութիւն քահանայ Հարախանեան ժԹ՝ դարու վերջաւորութեան եւ Ի. դարուն սկիզբը, երկար տարիներ Մամուլալի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւր եղած է. ան ժամանակ մը, մինչեւ 1920 գործակալ քահանայի պաշտօն ստանձնեց՝ պարտականութիւն ունենալով գիւղերէն պանիր եւ չորթան հաւաքել եւ իբրեւ ժողովուրդի նուէր գանձող յանձնել Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքին կամ Սուրբ Էջմիածնին:

Տէր Վահան քահանայ Հարախանեան, աւագանի անունով՝ Դաւիթ, Աղբուլաղի Տէր Թաղէոս Տէր Սարգսեանի մօտ գրաճանաչութիւն սորվելէ ետք, 1913էն 1916 իբրեւ ուսուցիչ պաշտօնավարեց Աղբուլաղի դպրոցին մէջ, յետոյ քահանայ օժուեցաւ եւ տասնամեակներ շարունակ իբրեւ հովիւ ծառայեց ժողովուրդին: Հետագային ան իր ընտանիքին հետ ինչոքի տան փոխադրուեցաւ եւ Մասփէտ Միւլէյմանի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հովիւր եղաւ:

Տէր Յովսէփ քահանայ Հարախանեան երկար տարիներ իբրեւ հովիւ ծառայեց գաւառի հայութեան, 1945էն 1949 Հնդկաստանի Պոմպիլ քաղաքի հայութեան հովիւր եղաւ, յետոյ վերադարձաւ Իրան եւ ինուընաստի Մասփէտ Միւլէյման քաղաքը հաստատուեցաւ:

Տէր Եզնիկ քահանայ Փուլազեան Սուրբարեան 1910էն սկսեալ եւ տարիներ շարունակ Սինդանի հովիւ, ժամանակ մը գործակալ քահանայի պարտականութիւն ստանձնեց. իր ջանքերով Սինդանի մէջ 1918ին դպրոց բացուեցաւ: 1946ին ան իր հարազատներուն եւ հօտին մեծ մասին հետ Հայաստան ներգաղթեց:

#### ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍՏԱՐԱԿԱՎԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ

Քիւսա Յարութիւն, Հարախանեան տոհմի ղեկավար դէմքերէն, 1915ի ինչոքի տան փոխադրուեցաւ եւ աշխատանքի մտաւ Մասփէտ Միւլէյմանի քարիւղի արդիւնաբերութեան մէջ, ուր ծառայեց ամբողջ քառասուն տարի: Հայ ազգային կեանքին մէջ հեղինակաւոր ներկայութիւն՝ անոր շնորհիւ Մասփէտ Միւլէյման հասնող հարիւրաւոր չարմահալացիներ քարիւղի արդիւնաբերութեան մէջ աշխատանք գտան. անոր բնակարանը օթեան էր համագիւղացիներու համար, ուր կ'իջեւանէին եւ օրերով ու երբեմն ամիսներով կը պատրաստուէին եւ սնունդ ու հոգատարութիւն կը ստանային պանդուխտներ:

Սինդան գիւղէն Յակոբ եւ Սամսոն Փուլազեաններ 1930ական տարիներուն ուսուցիչի պաշտօն վարած են հայրենի գիւղի դպրոցին մէջ: Սուրբիսա Փուլազեան երկար տարիներ Սինդանի տանուտէր եւ 1916ին հիմնադիրներէն եղած է գիւղի Արանք Բարեգործական Միութեան՝ նպատակ ունենալով նոր սերունդին դաստիարակութիւնը: Խոսքով Փուլազեան գործօն դերակատարութիւն ունեցած է Սինդանի կրթական եւ հասարակա-



Տէր Եզնիկ քահանայ Փուլազեան

կան կեանքին մէջ. 1925էն 1946 ան գիւղին Աշխատասէր Երիտասարդական Միութեան նախագահը եղած է:

Սուրբիսա Հարախանեան Աղբուլաղի մէջ 1925ին, դպրոցի հիմնադրութենէն ետք, ժամանակ մը հոն ուսուցիչ եղած է: Աղբուլաղի բնակիչ Սասայի Հարախանեան ազդեցիկ ու հարուստ եղած է. անոր նուիրատուութեամբ 1937ին գիւղին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ տանիքին վրայ լուսամուտներ բացուեցան:

Արարած Մարախանեան Սիրաքի մէջ 1908ին դպրոցի հիմնադրութենէն ետք իբրեւ աւագ ուսուցիչ եւ սեսուէ երկար տարիներ անգնահատելի ծառայութիւններ մատուցեց ժողովուրդին: 1930էն 1932 աւագ ուսուցիչի պաշտօն վարեց Լիվանեան գիւղին մէջ, իսկ 1935էն 1937 եւ 1938էն 1939՝ Մամուլալի դպրոցին մէջ: Մտաւորական բարձր արժանիքներով օժտուած՝ ան բազմաթիւ առակներ գրի առած է:

Թաղէոս Հարախանեան Սիրաքի ղեկավար դէմքերէն եղած է. անոր եւ Մարտիրոս Տէր Մարտիրոսեանի նախաձեռնութեամբ 1 Յունուար 1919ին հիմնուեցաւ Արծիւ Բարեգործականը՝ նպատակ ունենալով օգնել աղքատներուն, որբերուն, բժշկել չբաւար հիւանդները, ուսումի մղել երեխաները, օժանդակել գիւղի դպրոցին եւ փոռ բանալ:


#### ՂԱՐԱԽԱՆԵԱՆԵՐՈՒՆ ՅՐՈՒՈՒՄԸ. ԳԱՒԱՌԵՆ ԴԵՊԻ ԲԱՂԱՔՆԵՐ

Դարեր շարունակ Պախթիարի լեռներու հայութեան առաջնորդող ուժերէն հանդիսացող Հարախանեանները մինչեւ Ի. դարուն սկիզբը իրենց գիւղերուն մէջ կեդրոնացած՝ բազմանդամ նահապետական ընտանիքներով կ'ապրէին, հողագործներ եւ անասնապահներ էին, ցորեն, գարի եւ այլ հացահատիկներ կը մշակէին, ունէին այգիներ, կը բուժանէին ոչխար, այծ, կով, եզ, էջ եւ ձի. ունէին գոմեր, ուր կը պահէին անասունները ձմեռան ձիւններուն. ոչխարի, այծի ու կովու կաթէն մածուն, կարագ ու չորթան կը պատրաստէին. անոնց կիներն ու աղիկները գորգագործութեամբ կը զբաղէին:

Ի. դարու սկիզբէն Հարախանեան ընտանիքներ կամ անհատներ ընկալութիւն հաստատեցին Մասփէտ Միւլէյմանի, Ապատանի, Թեհրանի եւ Նոր Զուղայի մէջ: Սինդանի Փուլազեանները մեծ մասամբ 1946ին Հայաստան ներգաղթեցին: Հարախանեաններ իրենց պայանական օճախներուն կառուած մնացին մինչեւ 1950-1960ական տարիները, մինչեւ Չարմահալի հայաթափումը:

Հարախանեանները ո՛ր որ հաստատուեցան, շարունակեցին իրենց մասնակցութիւնը բերել ազգային հասարակական կեանքին: Անդրանիկ Հարախանեան Նոր Զուղայի Համայնական խորհուրդի նախագահ եղած է. Հայկազ Հարախանեան՝ Մասփէտ Միւլէյմանի, իսկ Դաւիթ Հարախանեան, Յակոբ Փուլազեան եւ այլք Ապատանի հայ համայնքին երեւելի դէմքերէն եղած են:

Հարախանեանները (եւ անոնց ենթաճիւղ Փուլազեանները), որոնք բազմաթիւ ճիւղաւորումներ եւ ընտանիքներ շրջաններու եւ յատկապէս Թեհրանի, Նոր Զուղայի եւ ինչոքի տանիքներուն, Հայաստանի եւ արտասահմանի մէջ:



Տէր Յովսէփ քահանայ Ղարախանեան



Եւաւար խան եւ գաւազը՝ Յովսէփ Խան Ղարախանեան

# ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՕՐԱԳԻՐ...

Շարունակում՝ 5րդ էջէն

Կանգնել եւ ամսասան-ըով ու հիասթափու-թեամբ նայում էին, թէ «թշնամական» կրակն ինչպէս է լափում ցորենի հասկերը: Ողջ քսան հեք-թար բերքն այրուեց: Երե-կոյեան տուն գնաց, յեն-ւեց դռանն ու կամաց մօրն ասաց. հացահատի-կը լրիւ այրուեց... Այս տարի էլ բանջա-րանոցում ջրհեղեղի բա-

ժին դարձաւ չորս թոն գետնախնձորը (ի միջի այլոց, սածիլները գնուել էին վարկային միջոցնե-րով): Անձրեւները շատ վարար էին, իսկ բանջա-րանոցները գտնուում են դեռեւս խորհրդային ժա-մանակներում կառուց-ւած եւ այսօր չգործող ամբարտակի ներքեւում: Ջրհեղեղը հաշիւների գլխաւոր գրքում նրա

համար գրանցեց հսկայա-կան ծախսեր՝ մօտ 2 մի-լիոն դրամ: Հարցնում եմ, ի՞նչ պէտք է անի: Ահնի վրայ բողբոջ գործ: Ոչ, պէտք է ջրամբարը քան-դել: Իսկ յետոյ, քիչ մտա-ծելով, աւելացրեց. «Երե-ւի քանդել էլ պէտք չէ, բանջարանոցները պէտք էր այլ տեղ հիմնել, բայց այդտեղ հողն է հիանալի, լրիւ հումուս է»:

Գիւղից վերադառնա-լիս մտածում էի ագար-կատէր Կարէնի մասին: Եւ նրա պատմածների մասին: Խնդիրների մա-սին, որոնք, կարծում եմ, միայն իրենք չեն: Դժուար-րու թիւներն են մասին, որոնք նա յաղթահարում է եղբօր հետ միասին: Այն մասին, որ այդու-հանդերձ, նա կեանքից չի բողբոջում: Նա դեռեւս եկամտունները չի հաշ-ւում, այլ օգնում է քա-ղաքում ապրող ազգա-կաններին: Այն մասին, որ նա երբեմն բարձր տո-կոսներով վարկ վերցը-նում է սոսկ այն բանի համար, որ գործը կանց հաճար, որ գործը կանց հաճար: «Հարկաւոր է

## ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ՉՐՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

### ՍՈՒՐԸ ԻՐ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՄԱՍԵՐՈՎ՝ ՎԵՐՉԱՊԷՍ ՈՒՇԱԳԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՅ



Հին քաղաքակրթ-թ ու թ ի ն ն եր ու պատմութեան մէջ իր փառքի օրերը ունեցած Լիբանանի Սուր քաղաքը ներ-կայիս կ'ապրի իր ամէնէն անփառու-նակ հանգրուան-ներէն մէկը: Ծովու օդն ու ջուրը, տար-բեր տեսակի ապա-կանումները, ինչ-պէս նաեւ չորագրու-ած քաղաքաշինու-թիւնը իրենց վեր-ջին ւաւերները կը գործեն հապարա-մակներու անցեալ ունեցող քաղաքին հնագիտական վայ-րերուն:

Քաղաքը իր վեր-ջին տարիներու լքեալ վիճակէն դուրս բերող եւ անոր մշակութային եւ պատմական աւանդը պահպա-նելու ձգտող նա-խաձեռնութիւններ արդէն իսկ սկսած են շարք մը կա-մակերպութիւննե-րու եւ անհատներու կողմէ, որոնք կ'ու-պեն Սուրին վերա-դարձնել անոր եր-բէմնի նախանձելի օրերը:

Նոր մշակուող ծրագիրներ կը նպատակադրեն հին Սուրի հե-տաքրքրական երեսները համախըմ-բել եւ պահպան ա-յառուստեամբ շին-վելու, ասուով է նա աշ-խատանքի մասին: Եւ անուով է: Այս տարի նա ընդամենը 4 հեկտարում 12 թոն խաղող կ'աճեցնի: Արդէն հաշուել է: Մտա-ծում է շրջանում ելեկտր-ակային աղաց կառուցել, չնայած, թանկ հաճոյք է: Իր իմացածի չափով գրել է պիզնըս - ծրագիրը եւ յոյս ունի, որ վարկ կը ստանայ:

սօրուան այցելուին ներկայացնել այնպի-սի ձեւով մը, որ ունե-նայ պատմական իմաստ, ներգրաւե-ւթիւնը իրենց վեր-ջին ւաւերները կը գործեն հապարա-մակներու անցեալ ունեցող քաղաքին հնագիտական վայ-րերուն:

Քաղաքը իր վեր-ջին տարիներու լքեալ վիճակէն դուրս բերող եւ անոր մշակութային եւ պատմական աւանդը պահպա-նելու ձգտող նա-խաձեռնութիւններ արդէն իսկ սկսած են շարք մը կա-մակերպութիւննե-րու եւ անհատներու կողմէ, որոնք կ'ու-պեն Սուրին վերա-դարձնել անոր եր-բէմնի նախանձելի օրերը:

Նոր մշակուող ծրագիրներ կը նպատակադրեն հին Սուրի հե-տաքրքրական երեսները համախըմ-բել եւ պահպան ա-յառուստեամբ շին-վելու, ասուով է նա աշ-խատանքի մասին: Եւ անուով է: Այս տարի նա ընդամենը 4 հեկտարում 12 թոն խաղող կ'աճեցնի: Արդէն հաշուել է: Մտա-ծում է շրջանում ելեկտր-ակային աղաց կառուցել, չնայած, թանկ հաճոյք է: Իր իմացածի չափով գրել է պիզնըս - ծրագիրը եւ յոյս ունի, որ վարկ կը ստանայ:

Սուրի պեղումները: Արդեօ՞ք հին քա-ղաքը տակաւին ակնհայտ չէր նայու-թեալ: Սուրի պեղումները: Արդեօ՞ք հին քա-ղաքը տակաւին ակնհայտ չէր նայու-թեալ: Սուրի պեղումները: Արդեօ՞ք հին քա-ղաքը տակաւին ակնհայտ չէր նայու-թեալ: Սուրի պեղումները: Արդեօ՞ք հին քա-ղաքը տակաւին ակնհայտ չէր նայու-թեալ:

### ՍԱԿԱՐԱՆ

Պէտքով սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիւցները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթակի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տիւնար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տիւնար	3996,00 - 4000,00	լ.ն.
Քուէյթեան տիւնար	4953,42 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տիւնար	2124,42 - 2128,42	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տիւնար	408,43 - 412,42	լ.ն.
Սեւուական ռիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կիւնէ	325,72 - 329,72	լ.ն.
Անգլիական սթերլին	2353,70 - 2357,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1014,35 - 1018,52	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2577,15 - 2581,17	լ.ն.
Ճափոնական հապար են	12,60 - 12,64	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	958,40 - 962,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	817,85 - 821,70	լ.ն.
Եւրօ	1480,95 - 1484,16	լ.ն.

● ՈՍԿԻ		
Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մեքսիքական փետոս	569,500 - 589,500	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	15,000,000 - 15,500,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	303,68 - 307,72	\$
Մէկ օնս արծաթ	4,64 - 4,68	\$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը:		
Եւրօ	0,981	
Քանադական տոլար	1,5698	
Ջուիցերիական ֆրանք	1,484	
Ճափոնական եեն	119,71	
Մէկ սթերլին	1,5608	

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԾՆԵԹՈՒԹԵՐ		
Գիցի Ա. ճշդում Գիցի Բ. ճշդում		
Ա. կարգի	4 1/8	
Բ. կարգի	4	4 2/8
Բաժնետիր		

### «ԱՉԴԱԿ» Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՅԱՆՔ

#### ՀԱՐՑՈՒ ՍԹԻ 9

Որո՞՞ք են աճուրդի շախմատահաշակ երկու կաճառատուները: (2 ճիշ)

Աճուն : .....

Մակաճուն : .....

Հասցէ : .....

Հեռ. : .....

Ծանօթ.- Պատասխաններու կտրոճները «Ազ-դակ» խմբագրութեան փոխանցել մրցանքի բո-լոր հարցումներուն ներկայացումէն ետք:

### ԽԱՉԲԱՈՒ ԹԻՒ 5209 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

<b>ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ</b>	<b>ՈՒՂԱՆԱՅԵԱՅ</b>
1. Հայկական համա-նուն գետ եւ լեռնաշղթայ - Նաեւ:	1. Գազաններու խումբ - Հակառակորդ:
2. Թակ - Միջնադար-րում՝ հիւպատոսի տիտ-ղոս:	2. Հայտնայ - Չափանիշ:
3. Այրուբենէն - Դրան վրայի ծաղկեպսակ:	3. Չայնայից գիրեր - Ատաղձ - Լարաւոր նուագարան:
4. Բուսական քաղցր հիւթ - Արական օտար անուն:	4. Մկան - Մոզէս Թարութիւնեանի գրչա-նուն:
5. Պոլսահայ մեծա-տուն - Այրուբենէն:	5. Խոփը արօրին միա-ցնող փայտ - Սարսափ:
6. Ջիւթ - Պարատե-սակ:	6. Դիտող - Արդար:
7. Հայ գուսան - Դէմք:	7. Բեղմնաւորուած ձուկ - Տարածքի միա-ւոր:
8. Շաղկապ - Փայ-տատ (հակ.) - Կրկնուած բաղաձայններ:	8. Հրամանատար - Չայնանիշ:
9. Սաստիկ քաղցած - Գեղեցիկ արքայ:	9. Անձնական դերա-տուն - Հեռու - Ամերիկե-ան պետութիւն:
10. Բրինձ - Ամբողջ:	10. Որթատունկի պարտէզ - Գրեական պիտոլքներէն:
11. Գումարուած ժո-ղով - Պատշաճ:	11. Նոյն գիրերը - Կող-կասան երկիր:

**ԹԻՒ 5208**

**ԽԱՉԲԱՈՒՆ**

**ԼՈՒԾՈՒՄ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Յ	Մ	Ո	Պ	Ս	Ա	Ք	Ո	Յ	
2	Օ	Ր	Օ	Ր	Օ	Ր	Օ	Ր	Օ	
3	Տ	Ս	Ա	Լ	Լ	Ա	Ա	Վ	Ո	Կ
4	Ձ	Ե	Կ	Ո	Յ	Յ	Ե	Ս	Ա	
5	Ն	Բ	Ո	Ո	Ո	Ս	Ի	Ի	Լ	
6	Ե	Կ	Կ	Կ	Ի	Ի	Լ	Ի	Ր	
7	Տ	Ք	Ք	Ք	Ս	Ս	Ս	Ս	Ս	
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
9	Մ	Ս	Ր	Կ	Ա	Ա	Ա	Ս	Ս	
10	Ա	Ս	Ի	Լ	Ե	Ն	Ա	Ս	Փ	
11	Ս	Տ	Ա	Կ	Ղ	Կ	Ա	Մ	Ք	

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Ուշադիր եղէք ձեր վարուելակերպին՝ մարդոց դիմաց, որովհետեւ ոչ մէկ արգարացում տեղ պի-տի չգտնէ: Եղբք համբերող եւ ներողամիտ:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլին 21 Մայիս)

Դուքս ելէք ձեր անկիւնէն, հեռու մի՛ քաշուիք, որովհետեւ ձեր մեկուսացումը չի փարատեր ձեր հոգ-բերը: Ծարուակեցէք ձեր ընկերային կեանքը:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսին 21 Յունիս)

Ունիք հոգեք, բայց այսօր ձեր վրայէն ու միտ-քէն պիտի հեռացնէք զանոնք: Խորունկ մտածողու-թեամբ ջանացէք փարատել ձեր դժուարութիւնները:

☆ **ԽՅԵՑԵՏԻՆ** (22 Յունիսին 23 Յուլիս)

Ձեր գերզգայնութիւնը պիտի վնասէ ձեզի, եւ պի-տի ունենաք պրկուած վիճակ մը: Պահ մը միտք բե-րէք ժողովրդական առածը եւ զայն կրկնեցէք այ-սօր. «Հոգ ընդդէմ հոգ չի պակսիր, բէՖ ընդդէմ բէՖ չի պակսիր»:

☆ **ԱՌԻՒԻՄ** (24 Յուլիսին 23 Օգոստոս)

Փոփոխութիւն մը պիտի ուզէք մտցնել ձեր որո-շումին մէջ, ապա դուք ձեզի պիտի հարցնէք արդ-եօք լաւ ընտրութիւն ըրի՞... Հաստատմիտ եղէք:

☆ **ԿՈՅ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Ձեր կեանքը բարեխառն է՝ արձանագրեր այս օրե-րուն. քիչ մը եւս համբերեցէք, եթէ օրը ըստ ձեր փա-փաքին չ'ընթացար: Ժամանակը կ'աշխատի ի նպաստ ձեզի:

☆ **ԿՇԻՌԻՔ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Արկածախնդրական օր մը պիտի ունենաք. դուք կը սիրէք այսպիսի բաներ: Պիտի նետուիք արկա-ծախնդրութեան գիրկը՝ ըստ ձեր տրամադրութեան:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Սննդառութեան հարցը շատ կարեւոր է այսօր: Ուտելիքի մասին նոր ձեւ մը որդեգրեցէք, որպէս-գի ձեր մարտոզութեան հարցը բարեխառնի: Ամէն ինչ բերան մի՛ թմբիր...:

☆ **ԱՆԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Եթէ մարգական փորձեր կը կատարէք, ձեր ուժե-րը մի՛ սպառէք: Հետեւեցէք տրամաբանական մար-գածելի մը՝ առնելով կարծիքը մասնագետի մը: Մարգանքը կարելոր է ձեր առողջութեան համար:

☆ **ԱՅԾԵՂՋԻՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Ձեր ընտանեկան յարկին տակ ստեղծուած որոշ հարցեր պիտի կարգադրէք այսօր: Ձեր հարգապե-տներուն հետ համախոհութեամբ լուծեցէք օրուան հարցը:

☆ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարին 19 Փետրուար)

Բացատրեցէք ձեր միտքը, յուսարանեցէք թիւրիմա-ցութիւնները, որպէսզի պարզ հարց մը չբարդանայ: Եղբք հակացողութիւն ցուցաբերող խօսակից մը:

☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ)

Նիւթական հաշիւներու պարագային եղբք ուշադիր: Ձեր հաշիւները լաւ կատարեցէք, մանաւանդ եթէ դրա-մատան խոստում կատարած էք, յարգեցէք ձեր խոս-տումը եւ վերստին կատարեցէք օրը - օրին:

### ՀԵՌԱՏԵՍԻԼ

10:00 - Մապահօ	14:00 - Անգլերէն լուրեր	12:05 - Երաժշտական ալիք
12:30 - Միւլիպ հոլ	14:20 - Ֆրանսերէն լուրեր	13:00 - Լուր
13:00 - Մաքուլ հասն	14:40 - Հայերէն լուրեր	13:05 - Top 10 (կարճ տարբերակ)
14:00 - Եւրոնիւզ	15:05 - Լուրեր	13:25 - Ալունք (սպալին երգ)
14:30 - Լուրեր	15:30 - Արաբերէն ֆիլմաշար	13:45 - Նորածնութիւն
15:00 - Մըշուար	16:30 - Թելեթրապիլ	13:55 - Նորատար
17:30 - Ֆիլմաշար	17:00 - Ըզդար քաղաք	14:00 - Լուր
18:30 - Կենդ. գծանկար	17:30 - Արաբական ֆիլմաշար	14:05 - Երաժշտական ալիք
19:30 - Արաբ. լուրեր	18:30 - Ալ Շախ	15:00 - Հայլուր
21:30 - Տեղական ֆիլմաշար	19:30 - Մոնտիպիլ յատուկ յայտագիր	15:20 - Սուրիական «Վերջին ապստան»
22:30 - Տեղական ֆիլմաշար	20:00 - Արաբերէն լուրեր	15:35 - Իմ սէր, իմ հաւատ, իմ եկեղեցի
23:00 - Ամերիկեան ֆիլմաշար	20:30 - Թուսուս մուսահարիք	16:00 - Հեռուստաների «Սիրոյ կախարհանք»
	20:35 - Եւրոպական լուրեր	17:00 - Երեւան Երեւան
	21:30 - Արաբական ֆիլմաշար	17:20 - Հարցամարտ
	22:30 - Տեղական ֆիլմաշար	17:50 - Մանրամասներ
	23:30 - Տեղական ֆիլմաշար	18:00 - Ալլուր
		18:10 - Կնոջ հմայքի գաղտնիք
		18:35 - Տուն-տունիկ
		19:00 - Հայլուր
		19:45 - Արաբի նշան
		20:00 - Փաստագրական սերիալ «Դարի հսկաները» «Գծեր եւ ծաւալներ»
		21:00 - Ռուսերէն
		22:00 - Հայլուր
		22:20 - Կեսգիշերային ձայնաքաղ
		23:20 - Հայլուր (ռուսերէն)
		23:25 - Հայլուր (անգլերէն)
		23:30 - Երեւոյեան Երեւան
		23:45 - Ալլուր
		00:00 - Լուր
		00:05 - Երաժշտական ալիք
		01:00 - Լուր
		01:05 - Top 10 (կարճ տարբերակ)
		01:25 - Ալունք (սպալին երգեր)
		01:45 - Նորածնութիւն
		01:55 - Նորատար
		02:00 - Լուր
		02:05 - Երաժշտական ալիք
		03:00 - Հայլուր
		04:00 - «Երէկ, այսօր, վաղը»
		04:25 - Իմ սէր, իմ հաւատ,



